ԿԱՐԾԻՔ

Թ.00.01 – փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցող

ՕՎՍԱՆՆԱ ԼԵՈՆԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻ

«ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԳՈՅԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ»

ատենախոսության վերաբերյալ

Թեմայի արդիականությունը և գիտական նշանակությունը.

Գրախոսվող ատենախոսությունը նվիրված է ժամանակակից փիլիսոփայական մարդաբանության և սոցիալական փիլիսոփայության ամենահրատապ խնդիրներից մեկին՝ արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում մարդու սոցիալ-մշակութային կեցության փոխակերպումներին: Աշխատանքը կարևոր փորձ է՝ համակարգելու հետարդիականության մարտահրավերները: Թեմայի հրատապությունն ու արդիականությունը կասկած չեն հարուցում: Արդի դարաշրջանում, երբ տեխնածին քաղաքակրթությունը և թվայնացումը հիմնովին վերափոխում են մարդկային կյանքի էկզիստենցիալ հիմքերը, սույն ատենախոսությունը ձեռք է բերում բացառիկ արդիականություն: Հեղինակին հաջողվել է համադրել դասական փիլիսոփայական մարդաբանության հասկացութային ապարատը (սահման, էկզիստենցիա, ինքնություն) արդի տեխնածին իրականության նորագույն երևույթների հետ (վիրտուալություն, սիմուլյակր, կիբորգացում): Հեղինակին հաջողվել է տալ արդի քաղաքակրթության «փիլիսոփայական ախտորոշումը»: Ատենախոսության մեջ ներկայացված «երկակի իրականությունների» հայեցակարգը թույլ է տալիս հասկանալ այն գոյաբանական իրավիճակը, որի առջև կանգնած է ժամանակակից մարդը: Հեղինակը փաստարկված ցույց է տալիս, որ տեխնածին կեցությունը ոչ թե օժանդակ միջավայր է, այլ մի նոր «բնություն», որը սկսում է թելադրել սեփական օրենքները՝ հանգեցնելով մարդու ապակենսաբանականացմանը: Սա վկայում է, որ հեղինակը պատրաստ է քննարկել մարդու տրանսֆորմացիայի ամենածայրահեղ սցենարները:

Ներածության մեջ Օ.Նահապետյանը հստակորեն մատնանշում է հետարդիականության դարաշրջանի հակասությունները, տեխնածին քաղաքակրթության ազդեցությունը մարդու գոյության, ինքնության և սոցիալական կապերի վրա: Քննարկվում են այնպիսի կարևոր մարտահրավերներ, ինչպիսիք են արհեստական ինտելեկտը, վիրտուալ իրականությունը, կենսատեխնոլոգիական միջամտությունները, ինքնության ճգնաժամը և դրանց գոյաբանական, էկզիստենցիալ հետևանքները: Թեմայի ընտրությունը լիովին արդարացված է և համահունչ ժամանակակից փիլիսոփայական մտքի հիմնական ուղղություններին: Աշխատանքը բնութագրվում է թեմայի ընդգրկունությամբ, բազմակողմանի մոտեցմամբ: Հետազոտությունը միջգիտակարգային հաջողված փորձ է՝ սինթեզելու դասական գոյաբանական հարցադրումները թվային դարաշրջանի էկզիստենցիալ տագնապների հետ: Հստակ է ձևակերպված հետազոտության նպատակը՝ արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում վերլուծել մարդու սոցիալ-մշակութային կեցության փոխակերպումների պատճառներն ու հետևանքները: Աշխատանքը բաժանված է երկու հիմնական մասերի, որոնք համապատասխանում են գլուխների բովանդակությանը: Առաջադրված ութ հետազոտական խնդիրները մանրամասնում են նպատակի իրագործման ուղիները և ցույց են տալիս հետազոտության համակարգված բնույթը:

Մեթոդաբանական ամբողջականությունը և գիտական ապարատը.

Աշխատանքն աչքի է ընկնում մեթոդաբանական խիստ հետևողականությամբ: Ատենախոսության մեթոդաբանական հիմքերը (համեմատության, պատմականության, համանմանության, վերլուծության և համադրության մեթոդներ) ընտրված են ճիշտ և համապատասխանում են թեմայի փիլիսոփայական բնույթին: Հեղինակը հստակորեն բացատրում է յուրաքանչյուր մեթոդի կիրառման նպատակը, ինչը վկայում է մեթոդաբանության գիտակցված ընտրության մասին: Արդյունավետորեն են օգտագործվում ֆենոմենոլոգիական և հերմենևտիկական մեթոդները՝ վերլուծելու համար մարդու ներաշխարհի և արտաքին տեխնածին աշխարհի բախումը: Այս ամենը թույլ է տալիս հիմնվել ամուր տեսական հիմքերի վրա և ներկայացնել համակողմանի

վերլուծություն: Հեղինակը տիրապետում է թեմային առնչվող գրականությանը: Հիմնախնդրի գիտատեսական մշակվածության աստիճանը մատնանշում է ինչպես արևմտյան, այնպես էլ հայալեզու մասնագիտական գրականության մանրակրկիտ ուսումնասիրություն: Գիտական ապարատը հարուստ է և բազմաշերտ. մեջբերված են ինչպես դասականներ (Կանտ, Նիցշե, Հայդեգեր), այնպես էլ ժամանակակից մտածողներ (Բոդրիյար, Կաստելս, Հարարի), ինչը վկայում է հեղինակի մտահորիզոնի և թեմային տիրապետելու մասին:

Աշխատանքի գիտական նորույթը.

Ատենախոսությունը պարունակում է գիտական նորույթ: Առաջադրված թեզերը (սահմանազանցման էութենական բնույթը, «թվային քոչվորի» հայեցակարգը, «կիբեռնետիկական անմահության» գոյաբանական վերլուծությունը, «դիմակով մարդու», «գեղապաշտ մարդու» և «զորանոցի մարդու» կերպարների մեկնաբանությունները) նոր մոտեցումներ են առաջարկում ժամանակակից մարդու կեցության վերլուծության համար: Դրանք հարստացնում են փիլիսոփայական մարդաբանության և սոցիալական փիլիսոփայության տեսական շտեմարանը: Ատենախոսության առավել ուժեղ կողմերից մեկը սահմանի և սահմանազանցման հասկացութային վերլուծությունն է (էջ 14-43): Հեղինակը չի սահմանափակվում սահմանի լոկ սոցիոլոգիական կամ իրավական սահմանմամբ, այլ բարձրանում է գոյաբանական մակարդակ՝ հիմնավորելով, որ մարդը «բնակվում է» հենց սահմանի վրա: Այս դրույթի տեսական նշանակությունն այն է, որ «թվային քոչվորի» և «հետկենսաբանական մարդու» հայեցակարգերի մշակումները կարող են օգտագործվել բուհական դասագրքերում: Արժեքավոր է այն միտքը, որ արդի տեխնոլոգիաները ոչ թե պարզապես փոխում են մարդու կյանքը, այլ վերաձևում են նրա գոյաբանական սահմանները՝ մարմնականը վերածելով վիրտուալի, իսկ վերջավորը՝ «կիբեռնետիկական անմահության» հավակնող նախագծի: Ատենախոսության մեջ ներկայացված «դիմակով մարդը», «գեղապաշտ մարդը», «զորանոցի մարդը» և «ավելորդ մարդը» կերպարները ինքնատիպ և փիլիսոփայորեն խորը վերլուծության արդյունք են: Հեղինակը հաջողությամբ ցույց է տալիս, թե ինչպես են այս կերպարները փոխկապակցված և արտացոլում են ժամանակակից մարդկային ինքնության

այլակերպումները՝ հանգեցնելով «ավելորդ մարդու»՝ որպես օտարվածության և անիմաստության խորհրդանիշի ձևավորմանը:

Ատենախոսության գիտական արժանիքները.

Աշխատանքի հիմնական արժանիքները կարելի է խմբավորել հետևյալ առանցքների շուրջ.

1. Հայեցակարգային նորարարություն և «Սահմանի» փիլիսոփայություն
2. Արդիականության համապարփակ ախտորոշում
3. Սոցիալական կեցության «թատերայնացման» խորքային վերլուծություն

Երկրորդ գլխում հեղինակը հանդես է գալիս որպես հմուտ սոցիալական փիլիսոփա: «Դիմակով մարդու» և «գեղագիտացված կեցության» վերլուծությունը (էջ 85-117) թույլ է տալիս տեսնել սպառողական հասարակության ներքին դրաման: Հեղինակը հաջողությամբ ցույց է տալիս, որ «լինելու» և «երևալու» միջև ընտրությունը ժամանակակից մարդու համար այլևս բարոյական հարց չէ, այլ սոցիալական գոյատևման տեխնոլոգիա: Այս համատեքստում «անդեմության» քննարկումը՝ որպես հետարդիականության բնութագիր, թույլ է տալիս նոր լույսի ներքո տեսնել անհատի վրա զանգվածային մշակույթի ազդեցությունը: Ատենախոսության արժանիքներից է նաև դրա կիրառական ներուժը: Մշակված տեսական մոդելները (օրինակ՝ «թվային քոչվորի» վարքաբանական բնութագիրը) կարող են հիմք հանդիսանալ ոչ միայն հետագա փիլիսոփայական հետազոտությունների, այլև սոցիալական քաղաքականության, կրթական ծրագրերի և թվային էթիկայի նորմերի մշակման համար:

Լեզվառճական մշակվածությունը

Չի կարելի չնշել աշխատանքի բարձր լեզվական մշակույթը: Աշխատանքի լեզուն հարուստ է, մասնագիտական և զուրկ ավելորդադաբանություններից: Հեղինակը կարողացել է բարդ բնազանցական (մետաֆիզիկական) կատեգորիաները մատուցել հստակ, տրամաբանված և գիտականորեն հագեցած հայերենով, ինչը մեծացնում է ատենախոսության ընկալելիությունը և գիտական հմայքը:

Ամփոփելով արժանիքների շարքը՝ կարող եմ վստահորեն պնդել, որ Օվսաննա Նահապետյանի ատենախոսությունը կայացած, ինքնատիպ և համակարգային

հետազոտություն է: Այն ոչ միայն պատասխանում է տրված հարցերին, այլև ծնում է նոր, արժեքավոր հարցադրումներ, ինչը բնորոշ է միայն լուրջ գիտական աշխատանքներին:

Դիտողություններ և թերություններ.

Չնայած աշխատանքի բարձր գիտական մակարդակին և շարադրանքի տրամաբանական հաջորդականությանը, այնուամենայնիվ, առկա են որոշակի խնդրահարույց և վերապահելի դրույթներ, որոնք հավելյալ պարզաբանման կարիք ունեն:

1. Ատենախոսության առաջին ենթագլխում հեղինակը «սահմանազանցումը» ներկայացնում է որպես մարդու էութենական, կառուցողական բնութագիր, որը հնարավորություն է տալիս հաղթահարել նախասահմանվածը: Սակայն, արդեն 1.2 ենթագլխում, սահմանազանցումը դիտարկվում է որպես «ապակառուցողական ընդվզում»: Այս հասկացութային երկվությունը շփոթություն է ստեղծում: Առաջանում է տրամաբանական խզում. եթե սահմանազանցումը մարդու ինքնահաստատման գոյաբանական միակ ձևն է, ապա ինչպե՞ս է որոշվում այն սահմանագիծը, որտեղից սկսվում է «ապակառուցողականությունը»: Հեղինակը չի տալիս այս տարբերակման հստակ չափանիշները, ինչը հասկացությունը դարձնում է վիճահարույց:

2. Հեղինակը հետարդիականության անդեմությունը բնութագրելիս՝ օգտագործում է «զորանոցի մարդը» եզրույթը: Ժամանակակից սոցիալական փիլիսոփայության մեջ (օրինակ՝ ըստ Բյոն-Չհոլ Հանի, որին հեղինակը հղում է կատարում) շեշտվում է, որ մենք անցել ենք «կարգապահական հասարակությունից» (որին բնորոշ է զորանոցը) դեպի «ձեռքբերումների հասարակություն»: Ըստ ամենայնի «Զորանոցի մարդը» եզրույթի օգտագործումը թվային հասարակության համար խնդրահարույց է: Զորանոցին բնորոշ է կոշտ աստիճանակարգությունը, մինչդեռ ցանցային հասարակությունը հորիզոնական է: Զորանոցը ենթադրում է արտաքին հարկադրանք, մինչդեռ թվային դարաշրջանի անդեմությունը կամավոր է: Այս տարբերակումը լիարժեք բացված չէ, ինչը, կարծում եմ, հնացած է դարձնում ընտրված փոխաբերությունը: Բացի այդ: 2.3 ենթագլխում անդեմությունը դիտարկվում է որպես հետարդիականության բնութագիր: Այստեղ լրացուցիչ հիմնավորման կարիք ունի այն դրույթը, թե ինչպես է սպառողական հասարակությանը բնորոշ «ծայրահեղ

անհատապաշտությունը» հանգեցնում «զորանոցային» (ստանդարտացված) վարքագծի: Այս երկու հակադիր բևեռների դիալեկտիկական կապը պահանջում է ավելի ընդարձակ փաստարկում:

3. Կարծում եմ «Կիբեռնետիկական անմահությունը» որպես մոտալուտ իրականություն դիտարկելու տեսակետը չափազանցված է և դեկլարատիվ բնույթ է կրում: Այն տպավորությունն է ստեղծվում, թե մարդու ապակենսաբանականացումն անխուսափելի է, և կիբեռնետիկական անմահությունը դառնում է նոր գոյաբանական հորիզոն: Թվայնացված աշխարհում, նկատում է հեղինակը, որտեղ սոցիալական կեցության տեխնիկական ձևերը գերազանցում են իրականությանը, մարդը կորցնում է զոհողությունների զնով ձեռք բերած սոցիալական սուբյեկտի կարգավիճակն ու ազատ մտածելու և որոշում կայացնելու հնարավորությունը: Կարծում եմ սա չափազանցված, վիճահարույց և վերապահելի պնդում է, որը զուրկ է բարոյագիտական այլընտրանքների քննարկումից, քանի-որ, անգամ աշխարհի տեխնոլոգիապես զարգացած երկրներում ազգաբնակչության որոշ շերտերի համար սա ընդամենը միտում է և ոչ օրինաչափություն, առավել ևս՝ կանխորոշված ապագա: Ապակենսաբանականացման մասին խոսելիս՝ ներկայացված փաստարկները կշահեին, եթե հեղինակը ավելի մանրամասն վերլուծեր, թե արդյոք «կիբեռնետիկական անմահությունը» իրապես վերացնում է էկզիստենցիալ տագնապը, թե՞ պարզապես փոխում է դրա ձևը:

4. «Վիրտուալ համայնապատկերի մեջ տարրալուծված մարդը» բաժնում հեղինակը երբեմն չափից ավելի է տարվում նկարագրականությամբ՝ թուլացնելով փիլիսոփայական վերլուծությունը: Էջ 85-110, որտեղ քննարկվում են «դիմակով մարդու» և «կեցության գեղագիտացման» հարցերը, հեղինակը հաճախ հեռանում է հայտարարված փիլիսոփայական-մարդաբանական վերլուծությունից և անցնում զուտ սոցիոլոգիական նկարագրության: Սոցիալական կեցության գեղագիտացումը նկարագրելիս՝ հեղինակը ներկայացնում է զանգվածային մշակույթի բազմաթիվ օրինակներ, սակայն չի անդրադառնում դրանց տրանսցենդենտալ հիմքերի բացահայտման և վերլուծության խնդրին:

5. «Դիմակով մարդու» վերլուծության բաժնում հեղինակը պնդում է, որ դիմակը «քողարկում է իսկությունը», բայց չի բացատրում՝ թե հետարդիականության շրջանում արդյո՞ք այդ «իսկությունը» ընդհանրապես գոյություն ունի, թե՞ այն նույնպես սիմուլյացիա է: «Ավելորդ մարդու» կոնցեպտը քննարկելիս ցանկալի կլիներ հստակ սահմանազատում կատարել դասական գրականության (Պեչորին, Օնեգին) և արդի սոցիալական մարգինալացման միջև:

6. Կան տեխնիկական վրիպակներ:

Առաջարկություններ.

Թեմայի հետագա լրամշակումների դեպքում, կարծում եմ, շահեկան կլիներ հետևյալ նկատառումների հաշվառումը:

1. Կարծում եմ հետաքրքիր կլիներ այն խնդրի պարզաբանումը, թե ի՞նչ փաստարկներով և ինչու՞ դասական մարդակենտրոն մարդաբանությունից հետհումանիզմի փիլիսոփայության մեջ (Ռ.Բրեյդոտտի, Դ.Հերեվեյ) անցում է կատարվում ոչ մարդակենտրոն մարդաբանության հայեցակարգին:
2. Ավելի խորը վերլուծեր Արհեստական Ինտելեկտի սուբյեկտայնության հարցը՝ որպես մարդու կեցության գլխավոր մարտահրավեր:
3. Հետագա հրապարակումներում հստակեցներ «արհեստական սոցիալականություն» և «վիրտուալ կեցություն» եզրույթների գոյաբանական սահմանագիծը՝ խուսափելու համար դրանց նույնացումից:
4. Առաջարկում եմ «սահմանազանցման» լրամշակված հայեցակարգը կիրառել նաև կրթական համակարգերի բարեփոխման համատեքստում՝ որպես «թվային քոչվորների» սերնդի հետ աշխատանքի մեթոդաբանական հիմք:

Վերոնշյալ դիտողությունները մասնագիտական լրամշակման բնույթ ունեն և չեն ազդում աշխատանքի ընդհանուր գիտական որակի վրա: Ուստի, ավարտելով խոսքս, ուզում եմ մեկ անգամ ևս նշել, որ Օվսաննա Նահապետյանի «Մարդու սոցիալ-մշակութային կեցությունը արդի գոյաբանական մարտահրավերների համատեքստում» ատենախոսությունն ինքնուրույն և համակարգված հետազոտություն է: Այն լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին

առաջադրվող պահանջներին: Հավելեմ նաև, որ սեղմագրում ներկայացված հրապարակված հոդվածներն արտահայտում են ատենախոսության հիմնական բովանդակությունը, ոգին ու սկզբունքները:

Ելնելով վերոգրյալ արժևորումներից և հաշվի առնելով ատենախոսության գիտական ու գործնական նշանակությունը, գտնում եմ, որ Օվսաննա Նահապետյանն արժանի է հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
փ.գ.թ., դոցենտ *Գ. Ա. Սողոմոնյան*
27 ապրիլի 2026թ.

Գ. Ա. Սողոմոնյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ՝ ԵՊՀ *Մ. Վ. Հովհաննիսյան*
գիտական քարտուղար